**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի 2015թ. մարտի 2-ի նիստի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) նիստը գումարվեց 2015թ. մարտի 2-ին՝ ժամը 12.30-ին ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական շենքում: Նիստը վարում էր Հանձնաժողովի տարիքով ավագ անդամ, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**:

Մասնակցում էին՝

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ՝** Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար,

**ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԸ՝** Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահ,

**ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ՝** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ.

**ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԸ՝** Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

**ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ՝** Մարդու իրավունքների պաշտպան,

**ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԸ՝** Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ,

**ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝** «Հայաստանի Հանրապետության դատավորների միություն» հասարակական կազմակերպության նախագահ:

Հանձնաժողովի նիստն արձանագրում էր Հանձնաժողովի աշխատակազմի ներկայացուցիչ **Միքայել Մինասյանը**:

**Գ. Հարությունյանը Հանձնաժողովի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգային հետևյալ հարցը.**

1. Մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը հաստատելու հարցը:

## ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑ

Քննարկելով օրակարգային հարցը, Հանձնաժողովը, համաձայն գնահատման արդյունքների, արձանագրում է մրցույթի մասնակիցների ցանկը՝ ըստ վարկանիշային հերթականության՝

1) **Արմեն Շուրայի Հարությունյան - 91,67 միավոր,**
2) **Արայիկ Գառնիկի Ղազարյան - 88,86 միավոր,**
3) **Վիգեն Վլադիմիրի Քոչարյան - 88,42 միավոր,**
4) **Վահե Միշայի Գրիգորյան - 84,70 միավոր,**
5) **Դավիթ Լևոնի Հակոբյան - 81,17 միավոր,**
6) **Ստեփան Կարոյի Միքայելյան - 73,79 միավոր,**
7) **Լիանա Օնիկի Հակոբյան - 71,65 միավոր,**
8) **Արտյոմ Աշոտի Գեղամյան - 70,31 միավոր:**
9) **Աննա Ռազմիկի Մարգարյան - 68,16 միավոր,**
10) **Ելիզավետա Ռեմիկի Դանիելյան - 66,78 միավոր,**
11) **Լիզա Ռաֆիկի Գրիգորյան - 63,91 միավոր,**
12) **Աստղիկ Ֆրունզեի Խառատյան - 52,29 միավոր,**
13) **Էդուարդ Աշոտի Մկրտչյան - 49,32 միավոր,**
14) **Նելիկ Նիկողոսի Հարությունյան - 46,04 միավոր:**

Հայաստանի Հանրապետության Նախագահի 02.08.2014թ. ՆՀ-199-Ն հրամանագրով հաստատված կարգի (**այսուհետ՝ Մրցույթի կարգ**) 27-րդ կետի համաձայն՝ հարցազրույցի փուլի գնահատման արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավորներ ստացած երեք հարցազրույցի մասնակիցներն ընդգրկվում են մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ), եթե ապահովված է սեռերի ներկայացվածության սկզբունքը: Եթե ամենաբարձր հանրագումարային միավորներ ստացած երեք հարցազրույցի մասնակիցներն էլ նույն սեռի են, ապա հանձնաժողովն իր որոշմամբ նրանցից առավել ցածր հանրագումարային միավոր ստացածին փոխարինում է հարցազրույցի փուլի

գնահատման արդյունքում ամենաբարձր հանրագումարային միավոր ստացած հակառակ սեռի մեկ հարցազրույցի մասնակցով:

Հանձնաժողովն արձանագրում է, որ հարցազրույցի փուլի գնահատման արդյունքներով հարցազրույցին մասնակցած 14 հավակնորդներից ամենաբարձր հանրագումարային միավորն են ստացել հետևյալ մասնակիցները.

Արմեն Շուրայի Հարությունյանը,

Արայիկ Գառնիկի Ղազարյանը,

Վիգեն Վլադիմիրի Քոչարյանը:

ԵԽԽՎ կողմից թեկնածուների կազմում տարասեռ թեկնածուների ընդգրկման պայմանը և ՀՀ Նախագահի 2014թ. օգոստոսի 2-ի թիվ ՀՆ-199-Ն հրամանագրի հավելվածով հաստատված կարգի 27-րդ կետի պահանջը հաշվի առնելով, Հանձնաժողովը գտնում է, որ ցուցակի 3-րդ տեղը զբաղեցրած արական սեռի ներկայացուցչին պետք է փոխարինել իգական սեռի ներկայացուցչով:

Հանձնաժողովն արձանագրում է, որ հարցազրույցին մասնակցած թվով 6 կին թեկնածուներից ամենաբարձր հանրագումարային միավոր է ստացել Լիանա Օնիկի Հակոբյանը՝ ընդհանուր ցուցակում զբաղեցնելով 7-րդ տեղը:

Հաշվի առնելով այն, որ 1-3-րդ տեղերը զբաղեցնող թեկնածուները արական սեռի ներկայացուցիչներ են, հիմնվելով սեռերի ներկայացվածության սկզբունքի վրա, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում երրորդ տեղը զբաղեցրած հավակնորդին (Վիգեն Քոչարյանին) փոխարինել առավելագույն միավորը հավաքած իգական սեռի ներկայացուցչով՝ Լիանա Օնիկի Հակոբյանով և հաստատել (կազմել) Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացվող մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի օգոստոսի 2-ի ՆՀ-199-Ն հրամանագրով հաստատված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի գործունեության և թեկնածուների ընտրության կարգի» 5-րդ կետով,

Հանձնաժողովը

**ՈՐՈՇԵՑ՝**

- Հաստատել (կազմել) Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացվող մրցույթում հաղթող ճանաչվածների հետևյալ ցուցակը (այսուհետ՝ Ցուցակ)՝

1) **Արմեն Շուրայի Հարությունյան,**
2) **Արայիկ Գառնիկի Ղազարյան,**
3) **Լիանա Օնիկի Հակոբյան:**

- Ցուցակը՝ սահմանված փաստաթղթերի հետ միասին ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին:
- Լիազորել Հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանին՝ Ցուցակը Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացնելու համար:
- Հանձնաժողովի աշխատակազմին՝ սահմանված կարգով հրապարակել Ցուցակը, ինչպես նաև հանրության համար հասանելի դարձնել սույն արձանագրությունը:

**Նիստը վարողը հայտնեց, որ օրակարգային հարցը սպառվեց և Հանձնաժողովի նիստը հայտարարում է ավարտված:**

**Նիստն ավարտվեց 2015 թվականի մարտի 2-ին ժամը 13.30-ին:**

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ՝**

Նիստը վարող՝ **ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

**ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆ**

**ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ**

**ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

**ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ**

**ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

**Արձանագրող՝ Միքայել Մինասյան**